

Հաճախ տրվող հարցեր գյուղատնտեսական կոոպերատիվների մասին

1. Ի՞նչ է կոոպերատիվը

Գյուղատնտեսական կոոպերատիվը հանդիսանում է ագրոպարենային համակարգում գործունեություն իրականացնող քաղաքացիների և իրավաբանական անձանց անդամության վրա հիմնված ու իր անդամների գույքային փայավճարների կամավոր միավորման միջոցով մասնակիցների նյութական և այլ կարիքների բավարարման նպատակով ստեղծված իրավաբանական անձ:

Ըստ կոոպերատիվների միջազգային դաշինքի (ԿՄԴ/ICA)՝ կոոպերատիվը մարդկանց ինքնավար ընկերակցություն է, ովքեր կամավոր կերպով միավորվում են՝ համատեղ սեփականություն հանդիսացող և ժողովրդավարական ձևով վերահսկվող ձեռնարկության միջոցով իրենց ընդհանուր տնտեսական, սոցիալական և մշակութային կարիքներն ու ձգտումները բավարարելու համար:

Այլ խոսքով՝ կոոպերատիվը մասնավոր ձեռնարկատիրության յուրահատուկ ձև է, որը պատկանում է իր անդամներին, ենթակա է նրանց կողմից համատեղ վերահսկողության և ծառայություններ ու ապրանքներ է մատուցում նրանց:

2. Որո՞նք են կոոպերատիվի տնտեսական օգուտները

Կոոպերատիվն ունի տնտեսական օգուտներ, որոնք բացակայում են իրավակազմակերպական այլ տարբերակների դեպքում.

ա) Անդամների համար գյուղներդրանքների և նյութատեխնիկական մատակարարումների գինն ավելի ցածր է լինում, քանի որ դրանք կոոպերատիվի պարագայում կարելի է գնել մեծածախ ծավալներով՝ դրանով իսկ կոոպերատիվին հնարավորություն ընձեռելով սակարկել և իջեցնել գները, որի հնարավորությունն անհատ ֆերմերը չունի:

բ) Կոոպերատիվը կարող է ապահովել բավարար չափով և լավ որակի պարարտանյութեր, թունաքիմիկատներ, սերմացու, կեր, քանի որ կոոպերատիվը բանակցությունների միջոցով ապահովում է դրանց երաշխավորված քանակն ու որակը:

գ) Արտադրանքը կոոպերատիվի միջոցով վաճառելու դեպքում ֆերմերին կարող են առաջարկվել լավագույնս շահավետ մեծածախ գներ՝ դրանով իսկ ավելացնելով նրա եկամուտները:

դ) Ֆերմերները կարող են խուսափել կապակցված շուկաներից, օրինակ երբ ներդրանքի ձեռքբերումը կամ արտադրանքի իրացումը կապված է վարկի տրամադրման հետ:

ե) Շուկայում կարող են ավելանալ մրցակցությունը և թափանցիկությունը՝ դրանով իսկ վերացնելով առևտրի մենաշնորհները և անդամների համար ապահովելով առք ու վաճառքի առավել շահավետ գներ:

զ) Անդամները կարող են համատեղ ձեռնարկել գործունեության նոր ուղղություններ՝ արտադրության ամբողջ շղթայում շարունակաբար ապահովելով արտադրանքի հավելյալ արժեք:

է) Ֆերմերներին կարող են մատուցվել նոր ծառայություններ, որոնք տեղում դեռևս չեն մատուցվում կամ որոնց միջոցով մատչելի են դառնում արտաքին ռեսուրսները և ծառայությունները:

3. Որո՞նք են կոոպերատիվին անդամակցելու ֆերմերների շարժառիթները

Ֆերմերների՝ կոոպերատիվին անդամակցելու շարժառիթները տարբեր են կախված արտադրվող գյուղմթերքի տեսակից, տնտեսության կառուցվածքից և ռազմավարությունից, ինչպես նաև շուկաների կառուցվածքից:

Կոոպերատիվին անդամագրվելու գերխնդիրը անհատ ֆերմերի, գյուղացու համար սեփական տնտեսության եկամուտների ավելացումն է: Կոոպերատիվ ձեռնարկություն

հիմնելու պատրաստակամ ֆերմերների խմբի համար կոոպերատիվը՝ որպես բիզնես մոդել, տալիս է սեփական եկամուտները, ինչպես նաև սոցիալական և բնապահպանական պատասխանատվությունը բարձրացնելու, ընդհանուր արժեքներով առաջնորդվելու, համայնքի բարեկեցությունը բարելավելու լայն հնարավորություններ:

4. Ի՞նչ ծառայություններ կարող են մատուցվել կոոպերատիվի կողմից կոոպերատիվի անդամներին

Կոոպերատիվի կողմից առաջարկվող ծառայությունները պետք է օգնեն արտադրողին արդյունավետությունը և որակը բարելավելու հարցում: Բոլոր ծառայությունների ապահովման նպատակով կոոպերատիվը միշտ պետք է հաշվի առնի արտադրանքի համար նախատեսված վերջնական շուկան:

Կոոպերատիվի կողմից ֆերմերներին որակական, քանակական և ժամանակային առումով շուկայական պահանջներն ապահովելու նպատակով առաջարկվող ծառայությունները կարելի է խմբավորել հինգ դասակարգումների մեջ.

Արտադրական ծառայություններ- այն բոլոր ծառայություններն են, որոնք ֆերմերներին աջակցում են ավելի արդյունավետ արտադրություն կազմակերպելու հարցում և ավելացնում արտադրանքի քանակն ու որակը: Արտադրական ծառայություններից են՝ ներդրանքների տրամադրումը (պարարտանյութ, թունաքիմիկատներ, սերմացու, կեր), արտադրությանն ուղղված հետազոտական և խորհրդատվական ծառայությունները, մեքենայացման և անասնաբուժական ծառայությունները, ինչպես նաև արտադրական հմտությունների կամ անասնապահության և աշխատանքի պայմանների վերաբերյալ խորհրդատվությունը:

Մարկետինգային ծառայություններ- այն բոլոր ծառայություններն են, որոնք աջակցում են արտադրողին՝ բարելավելով շուկաների հասանելիությունը: Դրանք

ներառում են շուկայական տեղեկատվության ապահովումը, պայմանագրային բանակցությունների դյուրացումը, ապրանքախթանումը, օրինակ՝ բրենդավորման միջոցով առևտրային ցուցահանդեսներ կազմակերպելով կամ դրանց մասնակցելով, կամ մարկենտինգային ռազմավարության և հավաստագրման վերաբերյալ խորհրդատվությամբ:

Քիզնես կառավարման ծառայություններ- այն ծառայություններն են, որոնք ուղղված են բարձրացնելու կոոպերատիվի անդամների կառավարման և ձեռնարկատիրական հմտությունները, օրինակ՝ քիզնես պլանի մշակման կամ հաշվապահական հաշվառման վերաբերյալ աջակցություն և ուսուցում:

Ֆինանսական ծառայություններ- վերաբերում են այնպիսի ծառայությունների, ինչպիսիք են խնայողությունները և վարկերի տրամադրումը, ապահովագրությունը, ներդրումային ֆոնդերը, սուբսիդիաների հասանելիությունը և վաճառքի երաշխիքները:

Հավելյալ արժեք ստեղծող ծառայություններ- ներառում են պահեստավորումը, փոխադրումը, վերամշակումը, տեսակավորումը և դասակարգումը, փաթեթավորումը և պիտակավորումը:

5. Արդյո՞ք կոոպերատիվները նույն կոլտնտեսությունները չեն

Միանշանակ է՝ կոոպերատիվը ոչ կոլտնտեսություն է, ոչ բաժնետիրական ընկերություն, ոչ էլ բարեգործական կազմակերպություն: Այն բառի լիարժեք իմաստով քիզնես է, որը, ինչպես և տնտեսական գործունեության որևէ այլ տեսակ, ղեկավարվում է ընդհանուր տնտեսական սկզբունքներով:

Կոոպերատիվը գործունեության առանձնահատուկ տեսակ է, քանի որ այն և՛ անդամների ընկերակցություն է, և՛ ձեռնարկություն: Կոոպերատիվը պետք է դիտել որպես մասնավոր ձեռնարկատիրության այնպիսի ձև, որը պատկանում է իր անդամներին, համատեղ վերահսկվում է նրանց կողմից և ծառայություններ ու

ապրանքներ մատուցում նրանց: Այլ խոսքով, գյուղատնտեսական կոոպերատիվը ագրոպարենային համակարգում գործունեություն իրականացնող իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ինքնավար, տնտեսական, անդամների հետ փոխադարձ նպատակներ ունեցող կազմակերպություն է: Կոոպերատիվի փոխադարձ նպատակը ապրանքների և ծառայությունների մատակարարման միջոցով անդամների՝ սպառողների և (կամ) մատակարարների շահերի բավարարումն է:

Կոոպերատիվի անդամները մասնակցում են և՛ որպես սեփականատեր, և՛ որպես օգտատեր: Նրանք իրավունք ունեն մասնակցել կոոպերատիվի նպատակների ձևակերպմանը, որոշումների կայացման և վերահսկման ու գնահատման գործընթացներին:

6. Ո՞րն է «շահույթի» և «ավելցուկի» տարբերությունը

Կոոպերատիվ շահույթ- կոոպերատիվ արտաքին գործարքների (կոոպերատիվի ոչ անդամներից ստացված) հասույթի և ծախսերի դրական տարբերություն.

Կոոպերատիվ ավելցուկ- կոոպերատիվ ներքին գործարքների (կոոպերատիվի անդամներից ստացված) հասույթի և ծախսերի դրական տարբերություն.

«շահույթի» և «ավելցուկի» տարբերությունը ոչ միայն այն է, թե ինչպես են դրանք ստացվել, այլև այն, թե ինչպես են բաշխվելու: Բաժնետիրական ընկերությունները շահույթը բաշխում են ըստ ներդրված կապիտալի համամասնության: Կոոպերատիվները շահույթը չեն բաշխում, այլ ուղղում են անբաժանելի ֆոնդերի համալրմանը: Բաշխելու դեպքում էլ կոոպերատիվները բաշխում են ավելցուկի մի մասը, այն էլ անդամների կոոպերատիվի հետ ունեցած գործարքների համամասնությամբ (ԿՄԴ 3-րդ սկզբունք): Ի տարբերություն բաժնետիրական ընկերությունների՝ կոոպերատիվների շահույթը հարկվում է միայն մեկ անգամ:

Կոոպերատիվների ավելցուկը սովորաբար ազատվում է հարկից, քանի որ այն չի դիտարկվում որպես շահույթ:

7. Ինչո՞վ են տարբերվում կոոպերատիվները բաժնետիրական ընկերություններից

Բաժնետիրական ընկերությունները կապիտալակենտրոն, ներդրողամետ և ներդրումային հարաբերություններով պայմանավորված ընկերություններ են:

Կոոպերատիվները մարդակենտրոն, անդամ-օգտագործողների վրա հիմնված և վերջիններիս հետ գործարքային հարաբերություններով պայմանավորված ընկերություններ են:

Բաժնետիրական ընկերությունների շարժիչ ուժը շահույթն է, և դրանք փորձելու են առավելագույն հատույց ապահովել ներդրված կապիտալից: **Կոոպերատիվները՝** որպես տնտեսական կազմակերպություններ, նույնպես պետք է ապահովեն դրական տնտեսական արդյունք: Սակայն դրանց նպատակը այդ դրական արդյունքի ապահովման միջոցով իրենց անդամների ընդհանուր տնտեսական, սոցիալական և մշակութային կարիքների բավարարումն է: Կոոպերատիվների դրական տնտեսական արդյունքը բաժանվում է երկու կոնկրետ մասերի՝ շահույթ և ավելցուկ:

Բաժնետիրական ընկերությունները շահույթը բաշխում են ըստ ներդրված կապիտալի համամասնության:

Կոոպերատիվները շահույթը չեն բաշխում, այլ ուղղում են անբաժանելի ֆոնդերի համալրմանը: Բաշխելու դեպքում էլ կոոպերատիվները բաշխում են ավելցուկի մի մասը, այն էլ անդամների՝ կոոպերատիվի հետ ունեցած գործարքների համամասնությամբ (ԿՄԴ 3-րդ սկզբունք):

Ի տարբերություն բաժնետիրական ընկերությունների՝ շահույթի կրկնակի հարկման (կորպորատիվ շահութահարկ և եկամտահարկ շահաբաժիններից), **կոոպերատիվների շահույթը** հարկվում է միայն մեկ անգամ: Կոոպերատիվի ավելցուկը սովորաբար ազատվում է հարկից, քանի որ այն չի դիտարկվում որպես շահույթ:

Բաժնետիրական ընկերության կառավարումը կենտրոնանում է կապիտալ ներդրումների և ընկերության աճի վրա:

Կոոպերատիվներում կառավարումը կենտրոնանում է անդամների վրա:

8. Որո՞նք են կոոպերատիվի հաջողության նախապայմանները

Կոոպերատիվը պետք է տեսանելի և շոշափելի օգուտներ ապահովի իր անդամների համար: Պետք է ունենա բիզնես քաղաքականություն իրականացնելու ընդունակ դինամիկ, փորձառու և շահագրգիռ ղեկավարներ: Կոոպերատիվի կառավարումը և կառուցվածքը պետք է համապատասխանի անդամների հմտություններին, ունակություններին և շահագրգռվածությանը: Կոոպերատիվի անդամները մասնակցում են և՛ որպես սեփականատեր, և՛ որպես օգուտատեր: Նրանք իրավունք ունեն մասնակցելու կոոպերատիվի նպատակների ձևակերպմանը, որոշումների կայացմանը և վերահսկման ու գնահատման գործընթացներին:

9. Ինչպե՞ս խուսափել կոոպերատիվի ձախողումից

Կոոպերատիվների ձախողման գլխավոր պատճառն անդամների ոչ լիարժեք մասնակցությունն է: Երբ անդամները չեն մասնակցում տվյալ կոոպերատիվի աշխատանքներում, պարտավորություններ չեն ստանձնում կոոպերատիվի հանդեպ, հանձնառու չեն ընդհանուր հաջողության հարցում: Յուրաքանչյուր անդամի կողմից ընդհանուր շահի գիտակցումը, նվիրվածությունն ու պարտավորվածությունն են, որ կոոպերատիվը դարձնում են կոոպերատիվ:

10. Ովքե՞ր կարող են դառնալ գյուղատնտեսական կոոպերատիվի անդամ:

Համաձայն «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքի՝ կոոպերատիվի անդամ կարող են դառնալ իրավաբանական և տասնվեց տարին լրացած ֆիզիկական անձինք: Տասնվեցից մինչև տասնութ տարեկան ֆիզիկական անձինք կարող են դառնալ կոոպերատիվի անդամ ծնողի, որդեգրողի կամ հոգաբարձուի կամ խնամակալության և հոգաբարձության մարմնի համաձայնությամբ կամ դատարանի որոշմամբ:

11. Որո՞նք են կոոպերատիվների միջազգային դաշինքի (ԿՄԴ) հռչակած սկզբունքները

Կոոպերատիվների՝ ԿՄԴ-ի կողմից 1995թ. հռչակած յոթ սկզբունքներն են.

- 1. կոոպերատիվին կամավոր և բաց անդամություն.** կոոպերատիվը կամավոր կազմակերպություն է, որը բաց է բոլոր այն անձանց համար, որոնք պատրաստակամ են որպես անդամ պարտավորություններ ստանձնել և օգտվել կոոպերատիվի ծառայություններից՝ առանց սեռային, սոցիալական, ռասայական, քաղաքական կամ այլ խտրականության.
- 2. անդամների կողմից կոոպերատիվի գործունեության ժողովրդավարական վերահսկողություն.** կոոպերատիվն իր անդամների կողմից վերահսկվող ժողովրդավարական կազմակերպություն է: Կոոպերատիվի անդամներն ակտիվ մասնակցում են կոոպերատիվի քաղաքականության մշակմանն ու որոշումների կայացմանը.
- 3. կոոպերատիվի անդամների տնտեսական մասնակցություն.** կոոպերատիվի անդամները նպաստում են կոոպերատիվի գույքի ձևավորմանը և հավասար իրավունքներ ունեն դրա օգտագործման նկատմամբ.

4. **ինքնավարություն և անկախություն.** կոոպերատիվն ինքնավար կազմակերպություն է: Այլ կազմակերպությունների, պետության հետ պայմանագրային հարաբերությունների մեջ մտնելու դեպքում պահպանվում է կոոպերատիվի ինքնավարությունն ու անկախությունը.
5. **կրթություն, վերապատրաստում և տեղեկատվություն.** կոոպերատիվը կրթություն և վերապատրաստում է ապահովում իր անդամների և աշխատողների համար: Իր գործունեության մասին հրապարակայնորեն իրազեկում է հանրությանը, անհրաժեշտ տեղեկատվություն է ապահովում պարտավորությունների վերաբերյալ.
6. **կոոպերատիվների միջև համագործակցություն.** կոոպերատիվն իր կանոնադրական խնդիրներն առավել արդյունավետ իրականացնելու, իր անդամների շահերին ծառայելու և կոոպերատիվ շարժումը հզորացնելու նպատակով համագործակցում է տեղական, ազգային, տարածաշրջանային և միջազգային համանման կառույցների հետ.
7. **համայնքի մասին մտահոգվածություն.** կոոպերատիվն աշխատում է հանուն համայնքի կայուն զարգացման՝ համաձայն անդամների կողմից հաստատված քաղաքականության:

12. Կոոպերատիվը՝ որպես իրավա-կազմակերպական ձև, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրանցելու համար ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ:

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում՝ <https://www.e-register.am/am/docs/49>, գրանցելու համար ներկայացվում է դիմում, հիմնադիր ժողովի արձանագրությունների փաթեթը, հիմնադիր ժողովի կողմից հաստատված կոոպերատիվի կանոնադրությունը, կոոպերատիվի գործադիր մարմնի ղեկավարի անձնագրային տվյալները և

սոցիալական քարտի համարը, էլեկտրոնային փոստի հասցեն և այլ փաստաթղթեր
(անհրաժեշտության դեպքում):